Զատարարության Փող

Trumpet's Sound

58-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻՍ
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2022

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավետարանը. . . . . Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Ուր որ Դու ուզում ես, Տե՛ր . . . . . Քաղված

Ողորմության խոստում . . . . . Հովան Գույումճյան

Թասերի դատաստանն ու Բաբելոնի անկումը (2) . . . . . QMBC պանորամա

«Մի՞թե ժողովուրդն իր Աստծուն չպետք է հարցնի» . . . . . Քաղված

Իմ բարի սամարացի . . . . . Վեր. Հովսեփ Հովսեփյան

Մի նամակի զորությունը. . . . . Քաղված

Աստծո պարգևն ու մենք . . . . . Ռեքս Տիրլավ

Նարգիզների պարտեզը. . . . . Քաղված

Թագավորի ծառայությունը . . . . . Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

Ավետարանը

Ա՝ նրանց ասաց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և ավետարանը քարոզեցե՛ք բոլոր մարդկանց: Ով հավատա ու մկրտվի, պիտի փրկվի, իսկ ով չհավատա, պիտի դատապարտվի» (Մարկ. 16:15-16):

Ի՞նչ է Ավետարանը:

Ավետարանը մեր Տեր Հիսուս Քրիստոսի բարի լուրն է:

«Տեր Աստծո Հոգին իմ վրա է, որովհետև Տերն օծել է ինձ հեզերին Ավետարանը քարոզելու. Նա ինձ ուղարկեց՝ կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն ու կապյալներին բանտի բացվելը հայտարարելու» (Եսայի 61:1):

«Եվ Հիսուսը շրջում էր բոլոր գյուղերն ու քաղաքները, սովորեցնում նրանց ժողովարաններում, քարոզում արքայության ավետարանը, և բժշկում ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդություններն ու ախտերը» (Մատթ. 9:35):

«Կույրերը տեսնում են և կաղերը՝ քայլում, բորոտները մաքրվում են, և խուլերը՝ լսում, մեռելները հարություն են առնում, և աղքատներին ավետարանն է քարոզվում» (Մատթ. 11:5):

Փրկիչը ծնվեց, Նրա անունը Էմմանուել պիտի կոչեն (Աստված մեզ հետ):

- Նա եկավ կորսվածին փնտրելու,
- Նա եկավ մեղավորին փրկելու,
- Նա եկավ, որպեսզի կյանք ունենանք և էլ ավելին:

Ինչո՞ւ Ավետարանի կարիքն ունենք:

Աշխարհի վիճակին նայելով՝ այսօր կարող ենք հասկանալ, թե ինչու Հիսուսը եկավ: Նա եկավ, քանի որ բոլորս մեղանչեցինք, ոչինչ չի փոխվել: Մարդիկ եսասեր, հպարտ, ագահ են, նրանց մեջ ոչ մի լավ բան չի բնակվում, զոհաբերությունները չբավականացրին, նրանց

թափած արյունը բավարար չեղավ: Միայն Հիսուսի արյունը կարող է մաքրել մեզ մեր բոլոր մեղքերից: Սա է Ավետարանը:

Ավետարանը երբեք չի փոխվում: Այն նույնն էր, նույնն է և նույնը կմնա:

«Ուրիշ ո՛չ մեկով փրկություն չկա, որովհետև մարդկանց տրված ուրիշ մի անուն չկա երկնքի տակ, որով մենք կարողանայինք փրկվել» (Գործք 4:12):

Օ՜, աշխարհս որքան կարիք ունի Հիսուսին, որքա՜ն ընկած ենք շնորհքից: Բայց փրկության դուռը լայն բաց է: Սիրելի՛ հավատացյալներ, Ավետարանը տարե՛ք աշխարհ: Ինչպես այն փոխեց մեզ, աշխարհին էլ կարող է փոխել, քանի որ Ավետարանը միայն խոսքեր չէ. Ավետարանը Աստծո Հոգով լցված զորություն է. այն երկսայրի սուր է, որը թափանցում է մեղավորի սիրտը:

Մենք ընկած տղամարդիկ ու կանայք ենք, ովքեր փրկության կարիք ունեն:

Մեծահարուստը դժոխքից աղաղակեց՝ ասելով. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թաթախի ջրի մեջ ու զովացնի լեզուս, որովհետև տանջվում եմ այս բոցի մեջ» (Ղուկ. 16:24):

Ավետարանը միակ ճանապարհն է դեպի Քրիստոսը, մարդկության միակ հույսը, միակ ճշմարտությունը: Եկե՛ք Հիսուսին, քանի որ փրկության դուռը լայն բաց է այսօր ձեզ համար:

Ինչո՞ւ շատ մարդիկ իրենց կյանքերը զոհեցին Ավետարանի համար:

Բոլոր առաքյալները իրենց կյանքը զոհեցին Ավետարանի համար: Վաղ եկեղեցու հավատացյալներից շատերը առյուծների առջև նետվեցին, շատերը նահատակվեցին Քրիստոսի համար: Քանի որ Ավետարանը կյանքեր է փոխում, մարդկանց է փոխում, այն կարող է նաև քեզ փոխել:

Ես նույնպես մեղավոր էի, երբ պատանեկության տարիներին Քրիստոսին եկա: Հիսուսը կոտրեց ինձ, ձևավորեց ինձ և նոր դարձրեց Իր մեջ: Ինձ համար ապրելը Քրիստոս է: Ես երբեք ափսոսանքով

ետ չեմ նայում մեղքի ստրկության տարիներին. ես նոր արարած եմ Քրիստոսով: Սա այն տեղն է, որին պատկանում եմ և այստեղ եմ ուզում մնալ:

Նա ամեն առավոտ նոր երգ է տալիս ինձ,

Նոր հույս՝ ընթացքս շարունակելու համար:

Նա հոգիս նորոգում է:

Իմ բաժակը շատ լիքն է:

Ես Նրա խաղաղության մեջ եմ:

Նա Իր սերը ցույց տվեց խաչի վրա, Նա մահացավ, որպեսզի մենք կյանք ունենանք: Նա ձրի փրկություն բերեց բոլոր մարդկանց համար: Նա Իր շնորհքը ցույց տվեց, երբ բոլորս մեղավոր էինք: Քրիստոսը սիրեց մեզ:

Ո՞րն է մեր՝ հավատացյալներիս պատասխանատվությունը Ավետարանի նկատմամբ:

Երբ գեղեցիկ ծաղիկ եմ տեսնում, ուզում եմ կիսվել դրա գեղեցկությամբ ուրիշների հետ: Երբ սքանչելի նորություն եմ լսում, ուզում եմ պատմել այն ուրիշներին: Երբ համեղ ուտեստ եմ ուտում, ուզում եմ, որ ուրիշներն էլ համտեսեն այն:

Դավիթն ասաց. «Որքա՜ն քաղցր են քո խոսքերն իմ քիմքին, մեղրից ավելի քաղցր՝ իմ բերանին» (Սաղ. 119:103):

Ի՞նչ պետք է անենք Ավետարանի հետ:

Ձեր սրտում պահե՛ք այն, ձեր ճակատի վրա գրե՛ք, շարունակե՛ք բարի լուրը տարածել ուրիշներին, հիշե՛ք, որ սա Նրա պատվիրանն է՝ ուղղված յուրաքանչյուր հավատացյալի: Մեր պարտքն է Տիրոջ առջև Ավետարանը՝ բարի լուրի պատգամը, հասցնել մարդկանց՝ երիտասարդներին ու մեծերին, աղքատներին և հարուստներին. մեղավորներին՝ ապաշխարության համար, ամբարիշտներին՝ փրկության համար, քանի որ Նրա գալուստը մոտ է: Հավատացյալները պատրաստ են հափշտակության, իսկ մյուսնե՞րը: Ո՞վ է պատմելու նրանց Ավետարանի բարի լուրի մասին:

Հ. Գ.

Ուր որ Դու ուզում ես, Տե՛ր

Տարիներ առաջ դեպի Ալաբամա ավետարանչական շրջագայություն արեցի: Շատ գյուղերում և թաղամասերում երբեմն օրական հինգ ժամ քարոզել եմ: Առավոտյան ժամը իննին սկսել եմ և գիշերվա ուշ ժամին վերջին ժողովս վերջացրել եմ: Մեծ ամբոխ էր հաճախում ավետարանչական այդ ժողովներին: Վաճառատներ, դպրոցներ, իրենց դռները փակելով, գալիս էին ժողովարան: Ավետարանիչները շատ լավ գիտեն, թե ինչ է նշանակում հոգնել: Ես չեմ կարող հավատալ, որ տրամաբանություն ունեցող մարդը ինքնակամ կընտրի ավետարանչի ծառայությունը, եթե Աստծուց կանչված չլինի:

Օր չի եղել, որ առանց հաստատ համոզման ճանապարհ գնամ: Ուրբաթ երեկոյան վերջացրի ժողովները և շաբաթ օրը մի պանդոկ գնացի՝ հանգստանալու: Երբ պատրաստ էի անկողին մտնելու, ինքս ինձ ասացի. «Վաղ առավոտյան կարթնանամ և կուղղվեմ դեպի Բիրմենգհամ: Երբ այնտեղ հասնեմ, ավտոմեքենաս կթողնեմ որևէ ավտոտնակում, մի քանի թերթ և ամսաթերթ կգնեմ, պանդոկ կգնամ, դուռը կկողպեմ ներսից ու ամբողջ օրը կհանգստանամ»:

Այդ գիշեր քնեցի: Հաջորդ օրը վաղ առավոտյան արթնացա: Շատ սաստիկ անձրև էր թափվում: Հիշեցի, որ գործավորները նորոգում են ճանապարհը, որ դեպի Բիրմենգհամ էր տանում: Ճանապարհը ցեխոտ էր: Մտահոգված էի: Ինքս ինձ ասում էի, թե արդյոք ապահով կհասնե՞մ տեղ: Եթե այսօր չգնամ, վաղը պետք է ճամփորդեմ: Ուստի լավ կլինի, որ հիմա ճանապարհ ընկնեմ: Անմիջապես անկողնուս մոտ ծնկի իջա ու հետևյալ աղոթքը արեցի. «Ո՛վ Տեր, օգնի՛ր ինձ, որ ապահով անցնեմ այդ ճանապարհը. ես Քո ծառան եմ, քո դաշտում եմ գործում»: Աստվածաշնչից հետևյալ համարը կարդացի. «Աղոթք անելիս ինչ որ խնդրեք, հավատացե՛ք, թե կստանաք ու կտրվի ձեզ» (Մարկ. 11:24): Հիմա հավատում եմ, որ Դու ապահով կանցկացնես ինձ այդ ճանապարհով: Տե՛ր, ես Քեզ եմ վստահում: Անմիջապես ճանապարհ ընկա: Անձրևը շարունակում էր թափվել.

ավտոմեքենաս ցեխոտ ճանապարհի վրա սահում էր և ուղիղ չէր ընթանում:

Աղոթել էի, վստահ էի, որ Տերը պահելու էր Իր խոստումը: Հավատում էի, որ կկարողանամ անցնել Աստծո օգնությամբ: Սակայն քիչ անց ավտոմեքենաս սահելով մխրճվեց ցեխի մեջ: Կարող եք պատկերացնել իմ վիճակը: Սկսեցի տրտնջալ ու բարկանալ Աստծո դեմ: Հաճախ բոլորիս պատահել է նման բան: Երբեմն ուզել ենք Աստծո հետ վիճաբանել ու ինքներս մեզ արդարացնել: Ես մտածում էի, թե Աստված ինչո՞ւ ինձ այսպես թողեց ցեխի մեջ. չէ՞ որ Իր այգու մեջ եմ գործում: Ես շատերի պես ցեխը չէի սիրում, սակայն ստիպված տաբատս ծալեցի և մտա ցեխի մեջ: Շուրջս նայեցի և տեսա, որ մի քիչ հեռվում հյուղակ կա: Գնացի և դուռը թակեցի: Մի մարդ ներսից թույլ տվեց, որ ներս գամ: Երբ ներս մտա, տեսա, որ մարդը շրջապատված է փոքրիկներով: Ներկայացրի իմ վիճակը՝ ասելով.

- Ավտոմեքենաս ցեխի մեջ մխրճվեց, եթե կարող եք ձեր ջորիները տրամադրե՛ք, որպեսզի այն դուրս հանենք:

Նա պատասխանեց.

- Հենց որ այս փոքրիկներին հագցնեմ, կգամ օգնելու ձեզ:

Եվ շարունակեց՝ ասելով.

- Ես փոքրիկ հագցնելուն վարժ չեմ, սակայն ստիպված եմ, երեկ նրանց մորը՝ կնոջս, թաղեցի: Առաջին անգամ է, որ նրանց հագուստները ես եմ հագցնում:

Կարո՞ղ եք պատկերացնել այդ հոգեհույզ և սրտաճմլիկ տեսարանը, որին ներկա էի. հայրը մայրություն էր անում իր ձագուկների համար: Աստված կարծես տղամարդու ձեռքերը այդ գործերի համար չի ստեղծել: Մի պահ նրան նայելուց հետո ասացի.

- Ես քեզ կօգնեմ:

Նստեցի աթոռակի վրա, փոքր աղջկան կանգնեցրի կողքս. նա սև աչքեր ու մազեր ուներ: Նրա աչքերից արցունքներ էին վազում՝ այտերը թրջելով: Աղջնակը լալիս էր մոր համար:

- Ես մայրիկիս եմ ուզում, - ասում էր:

Թաշկինակովս սրբեցի արցունքները, մազերը սանրեցի, գուլպաները հագցրի, որոնք արդեն ծակ էին: Մի քանի փաղաքշական խոսքերից հետո կոշիկներն էլ հագցրի, որոնցից խեղճ աղջնակի մատները դուրս էին գալիս: Նա սկսեց ժպտալ ինձ: Նույնպես փոքրիկ մանչուկին հագցրի: Քիչ հետո հայրը ասաց.

- Հիմա կարող ենք գնալ և ավտոմեքենան ցեխից հանել:

Երբ դռան մոտ հասանք, հարցրի նրան.

- Դուք փրկվա՞ծ եք:

Նա պատասխանեց.

- Ո՛չ, պարո՛ն, բայց իմ կինը շատ հավատարիմ քրիստոնյա էր: Այդ անկյունի մահճակալը տեսնո՞ւմ եք. նա գիշերները արթուն ժամերով իմ փրկության համար աղոթում էր Աստծուն և լալով աղաղակում էր:

- Շատ լավ, - ասացի, - մի պահ ջորիներին և իմ ավտոմեքենան մոռանանք: Աստվածաշունչս հանելով՝ կարդացի նրան Քրիստոսի սիրո մասին: Նա համոզվեց, որ ինքը մեղավոր է: Այդ պահին փրկվեց՝ ընդունելով Հիսուսին՝ որպես իր անձնական Փրկչի:

Նա խոստացավ ինձ հաջորդ կիրակի եկեղեցի գնալ, իսկ փոքրիկներին՝ կիրակնօրյա դպրոց տանել: Նաև ասաց, որ ժողովրդի մեջ վկայելով իր փրկությունը՝ կանդամակցի եկեղեցուն:

Այս դեպքով Տերը ինձ հասկացրեց, թե ինչու ցեխի մեջ ընկա: Այդ մոր աղոթքը իմ աղոթքից առաջ Երկինք էր հասել: Իմ աղոթքը մի կողմ էր դրվել: Մենք չենք կարող այսպիսի աղոթքի դեմ աղոթել: Աստված ասել էր թող քո աղոթքի պատասխանը մի քիչ ուշանա, նախ՝ այդ աղախնիս աղոթքին պետք է պատասխանեմ, հետո՝ քո:

Ես, չիմանալով ու չհասկանալով Աստծո կարգադրությունը, ուզում էի Նրա դեմ գործել: Շատ անգամ բոլորս մի՞թե նույն սխալի մեջ չենք ընկնում: Տերը թող առաջնորդի մեզ այնտեղ, ուր որ Ինքն է ուզում, և միշտ Իր կամքին հոժարեցնի:

Քաղված՝ «Զմայլելի դրվագներ» գրքից

Ողորմության խոստում

Բ Թագ. 9:1-7

1942 թ., մարտի 11. Ֆիլիպինյան կղզիներում քաղաքական վիճակը շատ վատ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ էր, և ամերիկյան զորքերը փորձում էին պահպանել Ֆիլիպինյան կղզիները՝ Ճապոնացիների ձեռքը դրանք չհանձնելու նպատակով: Երբ հստակ էր, որ հանձնվելու ժամանակը եկել էր, գեներալ Մակ Արթուրն ասաց իր զորքին. «Վիճակը վատ է, պետք է հանձնվենք, բայց ձեզ խոստում եմ տալիս, որ դարձյալ կվերադառնամ»: Իսկապես երկուսուկես տարի անց գեներալ Մակ Արթուրը վերադարձավ Ֆիլիպինյան կղզիներ: Նա խոստում տվեց և խոստումը պահեց: Պարտվեցին, հանձնվեցին, սակայն նրանց խոստացավ վերադառնալ՝ հույս ներշնչելով, որ հետագայում հաղթություն են ունենալու:

Բ Թագ. 9-րդ գլխում կարդում ենք Դավիթ թագավորի մասին, որ Սավուղի տնից մարդ էր փնտրում բարերարություն անելու համար: Ինչպես գիտեք, Իսրայելի առաջին թագավորը Սավուղն էր: Չնայած Աստված էր Իսրայելի թագավորը, և նպատակ չկար նրանց վրա թագավոր դնելու, բայց ժողովուրդը Սամուել մարգարեի մոտ գնաց ու պնդեց, որ թագավոր ունենան: Սամուելը դժգոհեց, բայց Տերը Սամուելին ասաց՝ քանի որ Իրեն չեն ընդունում իբրև իրենց Թագավորի, ուստի նրանց մի թագավոր կտա: Տերը Սավուղին թագավոր նշանակեց Իսրայելի վրա, բայց տարիներ անց Սավուղը Տիրոջ Խոսքին հնազանդվելը թողեց: Հետևաբար՝ Տերը Սամուել մարգարեին ուղարկեց՝ Դավթին թագավոր օծելու: Մինչև Դավիթը թագավոր եղավ, 12 տարի անցավ, որոնց ընթացքում Սավուղն անդադար Դավթին հալածում էր՝ սպանելու համար: Սավուղի որդին՝ Հովնաթանը, սիրում էր Դավթին, և մի օր այսպես արտահայտվեց. «Եթե հայրս ուզենա քեզ վնաս հասցնել, դա էլ եմ քեզ հայտնելու ու ուղարկելու եմ քեզ, որպեսզի խաղաղությամբ գնաս, ու ՏԵՐԸ քեզ հետ լինի, ինչպես իմ հոր հետ էր: Եվ ոչ միայն կենդանությանս օրոք ինձ հետ ՏԻՐՈՋ ողորմությամբ վարվես, որպեսզի չմեռնեմ»: Հովնաթանը գի-

տեր, որ Տերը մերժել էր Սավուղին ու նրա զավակների թագավոր լինելը և Դավիթին էր ընտրել: Ուստի Հովնաթանը խնդրեց, որ Դավիթը խոստանա իրեն և իր զավակներին ողորմություն ցուցաբերել: Դավիթը խոստացավ: 12 տարիների ընթացքում Դավիթը փախստական կյանք ապրեց: Պալատներում ապրելու փոխարեն ապրեց քարայրներում: Սակայն Տերը խոստացել էր, և 12 տարի անց նա թագավոր օծվեց: Թագավոր օծվելուց հետո Դավիթը հիշեց, որ Հովնաթանին խոստացել էր նրա ընտանիքին ողորմություն ցուցաբերել: Դավիթը փնտրել տվեց Սավուղի տնից որևէ մեկին: Սիբա անունով մի ծառա տեղեկացրեց, որ Հովնաթանը ոտքերը կաղ որդի ունի Լադաբարում: Դավիթը ուրախացավ՝ հիշելով Հովնաթանի սերը իր հանդեպ, և շտապեց իրագործել խոստումը: Հովնաթանի զավակի անունը Մեմփիբոսթե էր, որ եբրայերեն նշանակում էր «ամոթալի»: Երբ թագավորի ծառաները գնացին նրան բերելու, Մեմփիբոսթեն վախեցավ՝ կարծելով, թե թագավորը հրամայելու էր իրեն սպանել: Նա թաքնվում էր Լադաբարում, որ դարձյալ եբրայերեն նշանակում էր «անապատ տեղ», և չգիտեր Դավթի նպատակը: Երբ Դավիթը տեսավ նրան, ասաց. «Մի՛ վախեցիր, քանի որ քո հոր՝ Հովնաթանի սիրույն քեզ անպայման բարություն եմ ցույց տալո»: Երբ Սավուղը և Հովնաթանը մահացել էին, Մեմփիբոսթե մանուկին դայակը փախցրել էր մի հեռու տեղ՝ մահից ազատելու համար: Երբ վազում էին, դայակը ընկավ, Մեմփիբոսթեն նույնպես, ու երկու ոտքերը կաղ դարձան: Դավիթը՝ իբրև թագավոր, իրավասություն ուներ սպանելու իր թշնամու ընտանիքին, սակայն Հովնաթանի հանդեպ ունեցած սիրո համար Մեմփիբոսթեին ողորմություն ցույց տվեց: Այս տեսարանը նման է մեր Տիրոջ՝ մեր հանդեպ ունեցած սիրուն: Ամենակարող Տերը մեզ ասում է. «Ես ձեզ ստեղծեցի, բայց դուք ընկաք Եդեմի պարտեզում: Հիմա կաղ եք և չեք կարողանում քայլել, ուստի ապրում եք այնպիսի մի վայրում, որ նման է Լադաբարի անապատին: Ես ձեզ համար այն չստեղծեցի, այլ Պարտեզը, բայց դուք Ինձանից հեռացաք: Այդուհանդերձ, Ես ձեզ խոստում տվեցի, որ ձեր համար միջոց, ճանապարհ կստեղծեմ, որ կարողանաք Իմ ողորմությունը ստանալ, Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի սիրո համար»: Հովհ. 3:16-ում կարդում ենք, որ Աստված սկզբից սիրեց աշխարհը և միջոց ստեղծեց՝ Քրիստոսին ուղարկելով ինձ և քեզ համար մեռնելու: Տիրոջ Խոսքը Եսա-

յի 64:4-ում ասում է, որ պիղծ բանի պես եղանք, որ մեր բոլոր արդարությունները աղտոտ լաթի պես էին, այսինքն՝ ամոթալի վիճակ ունեինք, կաղ էինք, Մեմփիբոսթե էինք, բայց Տերը ասաց. «Տակավին սիրում եմ ձեզ, Իմ խոստումը հարգում եմ»: Եսային դարձյալ ասում է, որ մենք մոլորվեցինք ոչխարների պես, սակայն մեր բարի Հովիվը եկավ մեր հետևից, որ մեզ փնտրի ու փրկի: Աստված սիրեց մեզ և պատրաստ է մեզ մեր կաղ վիճակից ազատելու, Իր ողորմությունը շնորհելու, մեզ բժշկելու և նոր կյանք տալու: Երբ Դավիթը Մեմփիբոսթեին իր առջև բերեց, ասաց նրան. «Մի՛ վախեցիր, քանի որ քո հոր՝ Հովնաթանի սիրույն քեզ անպայման բարություն եմ ցույց տալու, ու քո հոր՝ Սավուղի բոլոր հողերը քեզ եմ վերադարձնելու»: Նախ՝ Դավիթը նրան կյանք շնորհեց: Մեմփիբոսթեն մինչև այդ վայրկյանը տակավին վախի մեջ էր, որ կյանքը կարող էր կորցնել: Տերը քեզ նոր կյանք տվեց այն վայրկյանին, երբ Տեր Հիսուսին ընդունեցիր, ուստի այլևս վախենալ պետք չէ հավիտենականության համար, քանի որ Քրիստոսի մեջ պահպանություն ունենք: Երկրորդ՝ Դավիթը խոստացավ Սավուղի արտերը ժառանգություն տալ Մեմփիբոսթեին: Տերն էլ մեզ հոգևոր պարգևներ, ժառանգություն և բարերարություն է խոստացել: Մենք արժանի չենք, բայց հանուն Քրիստոսի սիրո Տերը մեզ այդ բոլորը խոստացել է:

Երրորդ՝ Դավիթն ասաց Մեմփիբոսթեին. «...Ու դու միշտ իմ սեղանից ես հաց ուտելու»: Ի՜նչ մեծ պատիվ կզգաք, եթե ձեզանից մեկը նախագահի սեղանի մոտ հրավիրվի: Դավիթը Մեմփիբոսթեին ոչ միայն կյանք շնորհեց, ոչ միայն ժառանգություն տվեց, այլև հրավիրեց՝ իր հետ ամեն օր սեղան նստելու: Տերն էլ մեզ է ասում. «Ես եկա, որ նրանք կյանք ունենան, և որ այն ավելի առատորեն ունենան»: Տերը ընդունեց մեզ և փափագում է, որ Իր հետ ժամանակ անցկացնենք: Ի՜նչ երանելի պատկեր է: Դավիթն իր խոստումը հարգեց և Մեմփիբոսթեին սիրալիր կերպով ընդունեց: Նույնպես էլ իմ Երկնավոր Հայրը Իր խոստումը դեռ պատրաստ է հարգելու, եթե իմ անապատից դուրս գամ և կաղ վիճակով Իրեն մոտենամ: Նա ասում է. «Եկ Ինձ մոտ և համտեսի՛ր Իմ ողորմությունը»:

Եթե դու դեռ Մեմփիբոսթե ես, դեռ կաղ ես, դեռ անապատի մեջ ես և Աստծուց հեռու, Տերն ասում է. «Եկ. Քրիստոսով նոր կյանք

կտամ քեզ»: Որոշումը քոնն է: Իսկ եթե արդեն համտեսել ես Նրա ողորմությունը, գնա՛ և ուրիշներին պատմի՛ր: Խնդիր չէ, թե ուրիշը արժանի է կամ ոչ, հանուն Քրիստոսի սիրո ողորմությո՛ւն ցույց տուր այդպիսիներին, ինչպես Նա ցուցաբերեց մեզ: Դավիթը Հովնաթանին խոստացած ողորմությունը կատարեց, և երբ Մեմփիբոսթեն Դավթի սեղանի մոտ էր նստում, սեղանի ծածկոցը նրա ոտքերը ծածկում էր: Նույնպես էլ Տերը երբ մեզ կանչում է, ասում է. «Եկո՛ւր, Ինձ հետ սեղան նստիր»: Նա ներում է և անգամ մոռանում է մեր կաղ լինելը, որովհետև Քրիստոսի արդարությունը ծածկոցի պես մեր տկարությունները ու մեղքերը ծածկում է, երբ Տիրոջ ներկայության մեջ ենք լինում: Սա է խոստումը: Ե՛կ:

Հովան եղբ. Գույումճյան

❋ ❋ ❋

Տերը իմ հովիվն է. ես ոչնչի կարիք չեմ ունենա:

Ինձ պառկեցնում է խոտավետ արոտներում,
ինձ առաջնորդում է դեպի հանդարտ ջրերը:

Հոգիս վերականգնում է: Իր անվան համար ինձ առաջնորդում է
դեպի արդարության շավիղները:

Եթե անգամ մահվան ստվերի ձորից անցնեմ, չարից չեմ վախենա,
քանի որ Դու ինձ հետ ես, Քո ցուպն ու գավազանը՝
նրանք են ինձ մխիթարում:

Սեղան ես պատրաստում իմ առջև իմ թշնամիների ներկայությամբ.
գլուխս յուղով ես օծում, իմ բաժակը հորդում է:

Իսկապես բարիքն ու ողորմությունն ինձ են հետևելու կյանքիս
բոլոր օրերում, ու հավիտյան Տիրոջ տանն եմ բնակվելու:

Սաղմոս 23

Թասերի դատաստանն ու Բաբելոնի անկումը (2)

2.7 Այգու ողկույզների բերքահավաքը (14:17-20)

Ի տարբերություն երկրի բերքահավաքի, որի ժամանակ փրկվում են ճշմարիտ հավատացյալները, ողկույզների բերքահավաքը անխնա դատաստան է: Դա գուցե Արմագեդոնի ճակատամարտի նախերգանքն է, որը մանրամասն նկարագրված է Հայտ. 16:16-21-ում և հաջորդ գլուխներում:

Որթատունկը հաճախ օգտագործվում է սուրբգրությունում՝ որպես Իսրայել ազգի խորհրդանիշ: Մենք կարդում ենք. «Զորաց Տիրոջ այգին Իսրայելի տունն է» (Եսայի 5:7): Ուստի այստեղ այգու ողկույզների բերքահավաքը կարող է վերաբերել անհավատ Իսրայելի դատաստանին: Երբ հրեաները պատրաստվում էին խաչելու Հիսուսին, աղաղակեցին՝ ասելով. «Դրա արյունը մեր և մեր որդիների վրա թող լինի» (Մատթ. 27:25): Այս առնչությամբ Պետրոս առաքյալն ասաց. «Ում դուք (հրեաները) մատնեցիք և Պիղատոսի առաջ ուրացաք, երբ նա մտադրվել էր ազատ արձակել Նրան» (Գործք 3:13): Ուստի հնարավոր է, որ այգու ողկույզների բերքահավաքը նշանավորի այն ժամանակը, երբ Իսրայելը խստորեն կդատապարտվի կյանքի Հեղինակին սպանելու սարսափելի հանցագործության համար (Գործք 3:15):

Մյուս կողմից, եթե այգու ողկույզների բերքահավաքը վերաբերում է Արմագեդոնի ճակատամարտին, ապա դա կվերաբերի աշխարհի բոլոր բանակներին, որոնք, սատանայից ներշնչված, հավաքվելու են Արմագեդոնում՝ Տեր Հիսուսին հաղթելու համար: Սրա մասին կխոսենք 5-րդ բաժնում:

Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ Մեծ նեղության ժամանակաշրջանում կլինեն իսրայելացի շատ հավատացյալներ, ովքեր կփրկվեն այս դատապարտությունից (տե՛ս Հայտ. 12:14) և ի վերջո Քրիստոսի Հազարամյա թագավորության ժամանակ կհայտնվեն երկրի վրա՝ որպես Աստծո հատուկ ազգ:

3. Յոթ հրեշտակներ, յոթ պատուհասներ (15:1-8)

Այստեղ ունենք Հայտնության երեք նշաններից երրորդը (մյուս երկուսը՝ Հայտ. 12:1, 3): Հովհաննեսը տեսավ յոթ հրեշտակների՝ յոթ վերջին պատուհասներով: Աստծո բարկությունը ավարտվելու է: Այնուհետև նա տեսավ մի դրախտային տեսարան՝ կրակով խառնված ապակյա ծով, որի կողքին կանգնած էր Մեծ նեղության նահատակների խումբը, որը երգում էր՝ քնարները ձեռքներին: Ակնհայտ էր, որ նրանք հրեա էին, քանի որ երգում էին Մովսեսի և Գառան երգը:

Հիշատակվում են հին օրերը, երբ Իսրայելն ազատագրվեց Եգիպտոսից ու կանգնեց Կարմիր ծովի եզրին ու երգեց՝ ասելով. «Երգելու եմ Տիրոջը, որովհետև փառավոր հաղթանակ տարավ. ձիուն և ձիավորը ծովը գցեց» (Ել. 15:1-18): Բայց նաև հիշատակվում է Գառան մասին, ով Գողգոթայում մեծ հաղթանակ տարավ մեղքի և սատանայի դեմ: Նրանց երգած երգը երկրպագության, գովասանքի և փառքի երգ էր, քանի որ գիտակցում էին, թե ինչ էր արել Տերը՝ դարերի Թագավորը: Նրանք եզրափակում են իրենց երգը՝ ասելով. «Բոլոր ազգերը գալու են և Քո առաջ երկրպագելու են...» (Հայտ. 15:4):

Հովհաննեսը տեսնում է մեկ այլ երկնային տեսարան՝ տաճարից կամ Վկայության խորանից դուրս եկող յոթ հրեշտակներին՝ յոթ պատուհասներով: Նա տեսնում է, որ չորս կենդանի կենդանիներից մեկը (հմմտ. Հայտ. 4:6, 14:3, 19:4) հրեշտակներին տվեց յոթ ոսկե թաս՝ լցված Աստծո բարկությամբ, և տաճարը լցվեց ծխով: Սա ցույց է տալիս, որ Աստծո ողորմությունը կվերջանա և կփոխարինվի Աստծո դատաստանով: Ամենասուրբ վայրում գտնվող շնորհքի աթոռը, որն այնքան թանկ է Մովսեսի և նրանց համար, ովքեր խաղաղություն են գտել Աստծո հետ, այլևս ողորմության և շնորհքի աթոռ չէ, այլ դատաստանի աթոռ: Այս գլխի վերջին համարում ասվում է. «Եվ տաճարն Աստծո փառքից ու Նրա զորությունից ելած ծխով լցվեց, և ոչ մեկը չէր կարող տաճարը մտնել՝ մինչև ի կատար ածվեին յոթ հրեշտակների յոթ պատուհասները» (Հայտ. 15:8):

4. Աստծո բարկության յոթ թասերը (16:1-21)

Աշխարհի պատմության մեջ հասանք մի կետի, երբ ավարտվում է շնորհքի ժամանակը. իսկապես, ինչպես վերը նշեցինք, երկնային

տաճարը ստացել է դատաստանի բնույթ: Թասերը, որոնք օգտագործվում էին խունկի համար, այժմ լցված են Աստծո բարկությամբ, և երկիրն իր ողջ պատմության ընթացքում նախատիպը չունեցող նեղություն է կրելու (հմմտ. Մատթ. 24:21, Երեմ. 30:7):

Թասերի դատաստանները դիտարկելիս կտեսնենք, որ դրանք նըման են փողերի դատաստաններին, սակայն շատ ավելի ընդարձակ ու խիստ են: Մենք նաև կտեսնենք, որ այս դատաստաններից շատերը կարելի է համեմատել եգիպտացիների վրա հասած պատուհասների հետ, որոնք նկարագրված են Ելից գրքում:

Աստվածաշնչի որոշ ուսուցիչներ ենթադրում են, որ 2-րդ համարում նշված պալարները խորհրդանշում են հոգեկան անընդմեջ տառապանքները, 3-րդ համարում նշված արյունը բարոյական մահվան խորհրդանիշն է, 8-րդ համարում արևը խորհրդանշում է գերագույն իշխանությունը, իսկ խորշակահարությունը խորհրդանշում է մտավոր և ֆիզիկական անընդմեջ տառապանքը: Այս համարները մեկնաբանելիս մենք որդեգրել ենք պարզ մոտեցումը՝ բառացի ընդունելով նկարագրությունները (եթե նշված չէ խորհրդանիշը. հմմտ. Հայտ. 17:9-10):

4.1 Աստծո բարկության առաջին թասը

«Եվ առաջինը գնաց ու իր թասը դատարկեց երկրի վրա, և չար ու մորմոքող պալարներ գոյացան այն մարդկանց վրա, որոնք կրում էին գազանի դրոշմը, ու նրանց վրա, որոնք նրա պատկերին էին երկրպագում» (Հայտ. 16:2, հմմտ. Ել. 9:8-12):

Հնարավոր է, որ Աստված այս պահին թույլ տա մարդկությանը միջուկային պատերազմի մեջ մտնել: Հայտնի է, որ միջուկային պայթյունների ճառագայթման չափից ավելի ազդեցությունը կարող է առաջացնել մաշկային սարսափելի հիվանդություններ:

Եգիպտացիների ժանտախտը դիպավ միայն եգիպտացիներին (տե՛ս Ել. 9:11-ը): Ուստի այստեղ չար ու մորմոքող պալարները կազդեն միայն նրանց վրա, ովքեր ունեն գազանի դրոշմը և պաշտում են նրա կերպարին:

4.2 Աստծո բարկության երկրորդ թասը

«Ու երկրորդ հրեշտակն իր թասը ծովի վրա դատարկեց, և ջրերը մեռած մարդու արյան նման դարձան, և ծովում եղած բոլոր կենդանի արարածները մեռան» (Հայտ. 16:3, հմմտ. Հայտ. 8:8-9, Եզ. 7:14-24): Ազգերը, որոնց ապրուստը մեծապես կախված է ձկներից, հանկարծ կզրկվեն դրանցից: Սովը, հիվանդությունը և մահը շուտով վրա կհասնեն:

Երկրորդ փողի դատաստանը հանգեցրեց ծովային կենդանիների մեկ երրորդի մահվանը, բայց այժմ կա լիակատար ոչնչացում. «Ծովում եղած բոլոր կենդանի արարածները մեռան» (Հայտ. 16:3):

4.3 Աստծո բարկության երրորդ թասը

«Ու երրորդ հրեշտակն իր թասը գետերի և ջրերի ակունքների վրա դատարկեց, ու դրանք արյուն դարձան» (Հայտ. 16:4, հմմտ. Հայտ. 8:10-11, Եզ. 7:17-21): Ոչ միայն բոլոր ձկները կսատկեն, այլև խմելու, լվանալու կամ հանգստի համար ջրի աղբյուր չի լինի:

Հինգերորդ կնիքը ուսումնասիրելիս մենք նկատեցինք նահատակների աղոթքը. «Մինչև ե՞րբ դատաստան չես տեսնելու ու մեր արյան վրեժը չես պահանջելու երկրի բնակիչներից» (Հայտ. 6:10): Ահա երրորդ թասի դատաստանում նրանք իրենց պատասխանն են տալիս հրեշտակի բերանով. «Արդա՛ր ես Դու, ո՛վ Տեր, որ ես, և էիր, և լինելու ես, որովհետև այսպիսի դատաստաններ տեսար: Որովհետև նրանք սրբերի ու մարգարեների արյունը թափեցին, և Դու նրանց արյուն խմել տվեցիր, քանի որ արժանի են» (Հայտ. 16:5-6):

«Եթե մեկն Ինձ ծառայի, թող Իմ ետևից գա.
և որտեղ Ես եմ, այնտեղ էլ Իմ ծառան պիտի լինի.
եթե մեկն Ինձ ծառայի, Իմ Հայրը պիտի պատվի նրան»:

Հովհաննես 12:26

«Մի՞թե ժողովուրդն իր Աստծուն չպետք է հարցնի»

Եսայի 8:19

Արդյո՞ք կուզենայիք իմանալ ձեր ապագան: Օրինակ՝ ինչպե՞ս կդասավորվի ձեր անձնական կյանքը, կամ ինչպիսի՞ն կլինի ձեր կարիերան:

Այսպիսի հարցեր, բնականաբար, կարող են ծագել յուրաքանչյուրիս մոտ: Ցավոք, դեռ հին ժամանակներից մարդիկ փնտրել են դրանց պատասխանները գուշակների և աստղագետների մոտ: Եվ այսօր շատերը դեմ չեն օգտվելու նրանից: Սակայն մի՞թե հավատում եք, որ աստղագուշակությունը և նման բաները կարող են հիմնավոր գիտություն տալ ապագայի մասին: Ամեն ինչ Աստծո ձեռքերում է: Նա ասել է. «Գալիք բաների մասին Ի՛նձ հարցրեք» (Եսայի 45:11):

Մենք պետք է իմանանք, որ Աստծո Խոսքը մարդկանց բաժանում է երկու խմբի: Ոմանք հավատացին ու Աստծուն դարձան և լինելու են Նրա հետ հավիտենականության մեջ: Մյուսները չուզեցին ընդունել Հիսուս Քրիստոսի բարի լուրը և «պիտի պատժվեն հավիտենական կորստով» (Բ Թես. 1:9): Դուք շտապ պետք է մտածեք ձեր ապագայի մասին: Սա ամենակարևոր հարցն է:

Տեր Հիսուս Քրիստոսն ասել է. «Ես եմ աշխարհի լույսը. նա, որ Ինձ կհետևի, խավարի մեջ չպիտի քայլի, այլ՝ կյանքի լույսը պիտի ունենա» (Հովհ. 8:12):

Ուրեմն, դո՛ւրս եկեք խավարից դեպի լույսը՝ ընդունելով Հիսուսին՝ որպես անձնական Տիրոջ և Փրկչի: Դա թույլ կտա՝ կարգավորել ձեր ապագային վերաբերող հարցը, իսկ մյուս գործերում ստանալ Նրա օգնությունը և առաջնորդությունը՝ աղոթքներով դիմելով Նրան: Վախի և հետաքրքրասիրության փոխարեն դուք ձեռք կբերեք վստահություն և գիտակցում այն մասին, որ գտնվում եք ապահով պաշտպանության տակ:

Իմ բարի սամարացի

Ղուկաս 10:25-37

Օրենքի ուսուցիչներից մեկը մոտեցավ Հիսուսին ու հարց տվեց: Դա լավ հարց էր, բայց հարց տալու նպատակը սովորելը չէր, այլ Հիսուսին փորձելը: Նա հարցրեց. «Ի՞նչ պետք է անեմ հավիտենական կյանք ժառանգելու համար»:

Հիսուսը, հասկանալով այդ մարդու մտադրությունը, նրա հարցին երկու այլ հարցերով պատասխանեց. «Ի՞նչ է գրված օրենքի մեջ, ինչպե՞ս ես այն կարդում»: Օրենքի ուսուցիչը ճշգրտորեն ասաց պատվիրանները, որի համար Հիսուսը նրան գովեց, իսկ հետո նրան պատվիրեց գնալ ու կիրառել ասածը՝ ասելով. «Այդպե՛ս արա և կյա՛նք կունենաս»:

Արժանահավատություն, վստահություն ձեռք բերելու համար իրավաբանը բացատրություն խնդրեց. «Իսկ ո՞վ է իմ ընկերը»: Հիսուսը պատասխանեց՝ պատմելով բարի սամարացու պատմությունը: Այս պատմության սովորական մեկնաբանությունն այն է, որ պետք է սամարացու նման լինենք. սիրենք ու օգնենք մեր թշնամիներին: Հիմա դիտարկենք այս պատմության մեկ այլ մեկնաբանություն:

Այն մարդը, որին կողոպտեցին ու կիսամեռ թողեցին, խորհրդանշում է ինձ, քեզ, ցանկացած մեղավորի: Այդ մարդը Երուսաղեմից (խաղաղության քաղաք) Երիքով (անեծքի քաղաք) էր գնում: Երուսաղեմից Երիքով տանող ճանապարհը վարընթաց էր, ծովի մակարդակից 2500 ոտնաչափ բարձրանում էր, ապա 800 ոտնաչափ իջնում, իսկ երկարությունը 17 մղոն էր: Այն անցնում էր ապառաժոտ, անապատային վայրերով, որտեղ այդ օրերին ավազակները հաճախ էին հարձակվում և կողոպտում անպաշտպան ճամփորդներին: Այդ մարդն ընկավ գողերի ձեռքը: Սատանան գող է (Հովհ. 10:10): Գողերը մերկացրին նրան ու կիսամեռ թողեցին: Եդեմի պարտեզում Ադամն ու Եվան ևս մերկացան ամեն ինչից, մնացին միայն նրանց մահկանացու մարմինները: Աստված նրանց սուրբ, կատարյալ ու արդար էր ստեղծել, բայց սատանան նրանց զրկեց այդ ամե-

նից. նա նույնիսկ փորձեց գողանալ նրանց անմահությունը՝ նրանց կիսամեռ թողնելով: Արդյունքում՝ «բոլորս ծնվում ենք հոգևորապես մեռած» (Եփես. 2:1-5):

Քահանան և ղևտացին ոչ բավարար լուծումներ են մեղավորների փրկության համար: Քահանան խորհրդանշում է օրենքի դատապարտությունը, որտեղ չկա ո՛չ սեր, ո՛չ էլ կարեկցանք, միայն դատաստան է. «Դու չպետք է այս ճանապարհով գայիր, դա քո մեղքն էր»: Ղևտացին խորհրդանշում է կրոնական ուսուցումներն ու արարողությունները: «Ես կարող եմ քեզ ասել, թե որ ճանապարհով պետք է գայիր և հաջորդ անգամ որ ճանապարհով պետք է գաս»:

Այս արձագանքներից ոչ մեկը չի օգնում կիսամեռ, աղքատ, մերկ ու արնաշաղախ ճամփորդին: Նրա կարիքը չի բավարարվում, այդ մարդուն ոչ մի խորհրդատվություն կամ դատաստան չէր կարող առողջացնել: Նա այդպես էլ վիրավոր ու արնաթաթախ կմնար ու կմահանար:

Մարդկային սրտին հանդիմանությունից, դատաստանից ու քարոզից ավելին է պետք: Մարդիկ ցավի մեջ դանդաղ մահանում են թե՛ հոգևոր ու հուզական, թե՛ ֆիզիկական առումներով, իսկ նրանց մոտ կանգնած մարդիկ նույնիսկ չեն ուզում մատը մատին տալ նրանց օգնելու համար, բայց փայլում են՝ իրենք իրենց արդար համարելով, և իրենց իրավունք են վերապահում դատել ուրիշներին:

Բարի սամարացին խորհրդանշում է Հիսուսին՝ Փրկչին: Սամարացիները մերժված ժողովուրդ էին. հրեաները նրանց թերարժեք էին համարում: Հիսուսը նույնպես մերժված ու անարգված էր իրենների կողմից (Ես. 53:4): Սամարացու նման Հիսուսը ճանապարհ էր ընկել, նպատակակետ ուներ, գիտեր, թե ինչու է եկել և ուր է գնում (Ղուկ. 19:10):

Սամարացին կապեց այդ մարդու վերքերը՝ անցնելով բուն խնդրի լուծմանը: Հիսուսի առաքելությունն էր բուժել վերքերն ու մարդկանց փրկել մահից: Սամարացին գինի լցրեց՝ այդ մարդու վերքը լվանալու, ախտահանելու համար: Հիսուսն Իր արյունը թափեց՝ մեր վերքերը լվանալու, ախտահանելու և մեզ կյանք տալու համար:

Սամարացին յուղ օգտագործեց՝ այդ մարդու վերքերը դարմանելու համար: Յուղը Սուրբ Հոգու խորհրդանիշն է, որ եկավ՝ մեզ դարմանելու, բուժելու և օգնելու:

Սամարացին հոգ տարավ այդ մարդու մասին. տարավ պանդոկ՝ վճարելով բոլոր ծախսերը, մինչև նորից կվերադառնար: Հիսուսն էլ արեց այդ ամենը. նա նույնիսկ խոստացավ մեզ իր «տուն» տանել, որպեսզի հավիտենականությունն իր հետ անցկացնենք: Բարի սամարացու պատմությունը դեռևս ավարտված չէ. Տեր Հիսուսը դեռևս փնտրում ու գտնում է վիրավորներին, վշտահարներին, որպեսզի օգնի, փրկի ու հավիտենական կյանք պարգևի նրանց:

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Մի նամակի զորությունը

Ուեծամասնությունս ճանաչում ենք Ջան Ուեյնին՝ որպես դերասանի: Սակայն չգիտեք, թե ինչ եղավ նրա հետ մահանալուց առաջ: Ահա այդ պատմությունը:

Ռոբերտ Շուլըրի աղջիկը՝ Սինդին, մոտոցիկլետով պատահար ունեցավ, ինչի պատճառով ոտքը պետք է անդամահատեին: Ջան Ուեյնը շատ էր սիրում քարոզիչ Ռոբերտ Շուլըրին, ուստի նամակ գրեց նրա աղջկան՝ ասելով. «Սիրելի՛ Սինդի, շատ եմ ցավում ունեցած պատահարիդ համար: Հույս ունեմ, որ լավ ես լինելու»: Ստորագրված՝ Ջան Ուեյն:

Երկտողը հանձնվեց Սինդիին, և նա որոշեց պատասխանել հետևյալ ձևով. «Սիրելի՛ պարոն Ուեյն, ստացա ձեր նամակը: Շնորհակալ եմ, որ գրեցիք ինձ: Ես ձեզ շատ եմ սիրում: Լավ կլինեմ, քանի որ Հիսուսը կօգնի ինձ: Պարո՛ն Ուեյն, դուք ճանաչո՞ւմ եք Հիսուսին: Հույս ունեմ, որ գիտեք Նրան, քանի որ չեմ կարող պատկերացնել, թե Երկինքը կատարյալ կլինի առանց Ջան Ուեյնի: Եթե Հիսուսին դեռ չեք հրավիրել ձեր սրտի մեջ, ապա հույս ունեմ, որ հենց հիմա

կընդունեք Նրան՝ որպես Փրկչի և Տիրոջ: Երկնքում կհանդիպենք»: Հազիվ նամակը ծրարի մեջ դրեց, մի այցելու մտավ սենյակ:

- Ի՞նչ ես անում, - հարցրեց նա:

Սինդին պատասխանեց, որ նամակ էր գրել Ջան Ուեյնին, բայց չգիտեր՝ ինչպես ուղարկել այն նրան: Մարդն ասաց.

- Ի՜նչ զարմանալի է. այսօր երեկոյան Ջան Ուեյնի հետ ընթրելու եմ Նյու Փորթ Բիչում: Նամակը ինձ տո՛ւր, և ես այն նրան կհանձնեմ: Սինդին ուրախությամբ տվեց գրությունը, և մարդը այն բաճկոնի գրպանը դրեց:

Տասներկու հոգի սեղանի շուրջ նստեցին այդ երեկոյան: Նրանք ուտում և զվարճանում էին: Երբ մարդը ձեռքը գրպանը տարավ, նամակը զգալով՝ հիշեց այն: Ջան Ուեյնը սեղանի ծայրին էր նստած: Մարդը նամակը հանեց և ասաց.

- Այսօր Շուլըրի աղջկա սենյակում էի: Նա քեզ նամակ է գրել և ուզեց, որ փոխանցեմ քեզ: Ահավասիկ նամակը:

Մարդիկ շարունակեցին խնդալ ու զվարճանալ: Երբ մեկը պատահմամբ Ջան Ուեյնի կողմը նայեց, տեսավ, որ նա արտասվում էր: Նրանցից մեկը ասաց.

- Ի՞նչ պատահեց:

Նա ցածր ձայնով ասաց.

- Ուզում եմ այս նամակը կարդալ ձեզ: Երբ կարդաց գրությունը, սկսեց լացել: Ծալեց թուղթը, գրպանը դրեց և այն իրեն բերող մարդուն ասաց.

- Գնա այդ փոքրիկ աղջկան ասա՛, որ հենց հիմա այս ռեստորանում Ջան Ուեյնն իր սիրտը Հիսուսին տվեց և իրեն տեսնելու է Երկընքում:

Երեք շաբաթ անց Ջան Ուեյնը մահացավ: Երբեք չես իմանա, թե ինչ-որ մեկին ասած վկայությունդ ինչպիսի հավիտենական ազդեցություն կունենա:

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

Աստծո պարգևն ու մենք

Հավանաբար, մեզանից շատերի համար ճիշտ է, որ ավելի շատ նախընտրում ենք նվեր տալ, քան ստանալ: Դուք կասկածո՞ւմ եք: Մտածե՛ք բարեգործական կազմակերպություններին նվիրատվություններ կատարելու մասին: Արդյոք կնախընտրեիք նվեր տվո՞ղ լինել, թե՞ նվերը ստացող: Նվեր ստանալը դժվար է. դա թուլության և կարիքի ընդունում է: Դուք անզոր վիճակում եք՝ կախված ավելի մեծ ֆինանսական ուժ ունեցող մարդու առատաձեռնությունից կամ քմահաճույքից: Դուք չեք վերահսկում այն, ինչ պիտի ստանաք, միայն տվողը ունի այդ իրավունքը, և սա այն դիրքն է, որը բոլորս նախընտրում ենք ունենալ: Հետաքրքիր է, արդյոք սա՞ է պատճառը, թե ինչու երբ ինչ-որ մեկը մեզ նվեր է տալիս կամ բարիք է անում, մենք սկսում ենք ծրագրել, թե ինչով ենք փոխադարձելու: Բոլոր հարաբերություններում տալու և ստանալու բնական մակընթացությունը նկատելի է, որն օգտակար է ու ճիշտ: Այնուամենայնիվ, բոլորս ճանաչում ենք մարդկանց, որոնց անհնար է բարիք անել կամ նվեր տալ՝ առանց դրա դիմաց շուտով ինչ-որ կերպով փոխադարձը ստանալու: Այն ավելի շատ նման է բումերանգի, որը երբեք չես կարող ընդհատել: Այն շարունակում է վերադառնալ: Թվում է, թե մեր հարաբերությունները ավելի նման են շուկայական հարաբերությունների, որտեղ շատ կարևոր է առևտրային պատշաճ հավասարակշռություն պահպանելը:

Երևի ճիշտ է ասել, որ մենք ավելի շատ նվերներ ենք փոխանակում, քան տալիս ենք: Մեզանից քանիսը Սուրբ Ծնունդից մի քանի օր առաջ շտապել են սուրբծննդյան բացիկ ուղարկել այն անձին, ումից շնորհավորական բացիկ են ստացել, և մոռացել են նրան շնորհավորել: Հաշիվը հավասար պահելը այնքան կարևոր է: Մենք այնքան դժվար ենք ընդունում այդ բացիկը՝ որպես բարի քայլ դիմացինի կողմից: Մենք մեր մեջ մտածում ենք, թե պետք է անպայման քարտին քարտով պատասխանենք, որպեսզի պահպանենք առևտրի հավասարակշռությունը:

Իսկապես ձրի նվերի գաղափարն այնքան խորթ է մեր մշակույթին, որ անհրաժեշտ է Սուրբ Հոգու հայտնությունը՝ օգնելու մեզ հասկանալու, թե Աստված ինչ ձրի պարգև տվեց մեզ. «Հոգին, որ Աստծուց է, որ ճանաչենք այն ամենը, ինչ Աստծուց շնորհվեց մեզ» (Ա Կորնթ. 2:12):

Այս շուկայական փոխհարաբերությունների աշխարհում ապրելը խանգարում է մեզ հասկանալ և ընդունել Աստծո անսահման առատաձեռնությունը, որին չենք կարող փոխադարձել: Աստծո հետ առևտրի մտնելը անհնարին է, և այնուամենայնիվ, զարմանալի, թե որքան հաճախ ենք փորձում այդպես անել:

Կարծում եմ, որ Գողգոթայի վրա Աստծո ցուցաբերած սքանչելի պարգևին երկու հնարավոր պատասխան կա: Առաջինը՝ Աստծո հետ շուկայական հարաբերություն մշակելն է: Այդպիսի անձը դժվարանում է խոնարհության դիրք ընդունել: Նա հաճախ գործի է դնում սեփական միջոցները հաճախ անգիտակցաբար, որպեսզի Աստծուն ինչ-որ կերպով հատուցի: Կարծես նա իսկապես չի ստացել Աստծո պարգևը և անգիտակցաբար փորձում է վերադարձնել այն ծառայության կամ որևէ այլ տեսքով: Նրան հաճելի չէ Աստծո առատաձեռնությունը, խոնարհ գտնվելը, կախվածության մեջ լինելու դերը: Նման վերաբերմունք ունեցող անձը քրիստոնեական ծառայությանը մոտենում է ոչ թե ի սրտե, այլ պարտականությունից դրդված և հաճախ ներքին հյուծվածության և անզորության զգացումով:

Երկրորդը՝ Աստծո տված պարգևը պատրաստակամորեն ընդունելն է: Այդպիսի մարդիկ իրենց ձեռքերը Աստծո առաջ պարզած են ապրում: Նրանք գոհ ու համաձայն են, որ Աստված լինի իրենց կյանքում տվող կողմը: Նրանք գիտեն, որ երբեք չեն կարող հավասարվել Աստծուն և գոհ են խոնարհի դիրք գրավելով, կախում ունենալով Նրա շնորհից: Այս տեսակի կյանքից դուրս հոսում է ոչ միայն հնազանդ ծառայություն, այլև զորացնող, բուժիչ ազդեցություն, որը դիպչում է ու փոխում իրենց շրջապատող մարդկանց կյանքերը:

Անընդհատ «ընդունող» կողմում գտնվելը արդյունավետ կյանքի և ծառայության բանալին է:

Նարգիզների պարտեզը

Մի քանի անգամ աղջիկս հեռախոսով զանգահարեց՝ ասելով.

- Մամա՛, պետք է անպայման գաս և նարգիզները տեսնես նախքան դրանց ժամանակը անցնելը:

- Ուզում եմ գնալ, բայց երկու ժամվա ճանապարհ է: Լա՛վ, հաջորդ երեքշաբթի կգամ, - ասացի՝ թեև մի քիչ դժկամելով:

Այդ օրը անձրևոտ էր և ցուրտ, բայց խոստումս պահեցի: Երբ աղջկաս՝ Քարոլինի տուն մտա, թոռնիկներիս խանդավառ բարի գալուստը ինձ ուրախացրեց:

- Մոռացի՛ր նարգիզները, - ասացի աղջկաս, բայց նա պնդեց, որ անպայման պետք է տեսնենք դրանք:

Քսան րոպե քշելուց հետո քարքարոտ ճանապարհից թեքվեցինք և փոքրիկ եկեղեցի տեսանք, որի մոտ ձեռագիր ցուցանակ կար՝ վրան գրված՝ Նարգիզների պարտեզ: Ավտոմեքենայից իջանք և փոքրիկների ձեռքը բռնած՝ արահետով Քարոլինին հետևեցի: Երբ անկյունից թեքվեցինք, վեր նայեցի, և կարծես շունչս կտրվեց: Դիմացս պարզվեց շա՜տ հրաշալի տեսարան: Կարծես մեկը ոսկու տակառ էր թափել այդ լեռան և շրջակա բլրի մոտ: Ծաղիկները շքեղորեն ցանված էին շրջանաձև՝ կապված մուգ նարնջագույն, ճերմակ, դեղին և վարդագույն մեծ ժապավենների նման: Գույնզգույն նարգիզները մեծ խմբերով ցանված էին հատուկ կերպով: Հինգ հեկտար ծաղիկներ կային:

- Ո՞վ է արել սա, - հարցրի Քարոլինին:

- Մի կին, - պատասխանեց աղջիկս: - Նա այս հողամասի վրա է ապրում, - ասաց և ցույց տվեց ծաղիկների մեջտեղը գտնվող գողտրիկ բնակարանը: Քայլեցինք դեպի այդ տունը: Պատշգամբի առջև ցուցատախտակ կար, որը վերնագրված էր. «Պատասխաններ ձեր հարցերին»:

Առաջին պատասխանն էր՝ «50,000 ծաղկի սոխ», երկրորդը՝ «Մեկ

առ մեկ ցանված մի կնոջ կողմից, որ ունի երկու ձեռք, երկու ոտք և մեկ ուղեղ»: Երրորդ պատասխանն էր՝ «Սկսվել է 1958թ.-ին»:

Ինձ համար այդ վայրկյանը կյանքս հեղաշրջող փորձառությունն էր: Մտածեցի այս հրաշագործ կնոջ մասին, ով ավելի քան քառասուն տարիներ առաջ մեկ ծաղիկի սոխ էր ցանել՝ այս լեռնակողմում գեղեցկություն և ուրախություն բերելու տեսիլքով: Տարեցտարի մեկ ծաղիկ ցանելով՝ այս անծանոթ կինը աշխարհի իր ապրած անկյունը փոխել էր հատուկ կերպով: Օրը օրին նա այս արտասովոր, սքանչելի, ներշնչող գեղեցկությունը ստեղծագործել էր համբերությամբ: Նրա նարգիզների պարտեզի սկզբունքը ինձ սովորեցրեց մեծագույն գաղտնիք, որը արժեր նշել:

Մենք նույնպես կարող ենք օրինակ վերցնել այս կնոջ կատարելագործումից: Սովորենք քայլ առ քայլ առաջ գնալ դեպի մեր նպատակակետը՝ ժամանակը ճիշտ օգտագործելով: Մենք նույնպես կարող ենք մեր գտնված անկյունները փոխել, երբ հարատևությամբ և տեսիլքով գործենք:

- Կարծես տխուր եմ, - ասացի աղջկաս: - Ինչե՞ր կարող էի իրագործել, եթե 35-40 տարի առաջ խորհեի հոյակապ նպատակակետի մասին և աշխատեի քայլ առ քայլ գործադրել փափագս այս տարիների ընթացքում: Պատկերացրո՛ւ՝ ինչեր կարող էի անել...:

Աղջիկս շեշտակի կերպով ինձ նայելով՝ ասաց.

- Վաղն իսկ սկսի՛ր, մա՛մ:

- Ճի՛շտ է: Անիմաստ է անցյալի կորսված ժամերի կամ պատեհությունների համար ողբալ: Ջղջալու փոխարեն կարող եմ այս սովորած դասը գործադրել:

Ուստի մի՛ սպասիր, որ այս կամ այն բանը լինի ուզածդ անելու համար: Հենց այսօր սկսի՛ր ցանկացած երազ իրագործել: Ուրախությունը ճամփորդություն է և ոչ թե վախճան: Ուստի գործի՛ր սիրով և համբերությամբ: Պողոս առաքյալի նման «Դեպի նպատակակետն եմ վազում՝ Հիսուս Քրիստոսով Աստծո բարձր կոչման մրցանակի համար...» (Փիլ. 3:14):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

Թագավորի ծառայությունը

1912թ.-ին 25 տարեկան հասակում Ավետարանի սպասավոր, երաժիշտ ու օրհներգների հեղինակ Ալֆրեդ Հենրի Էքլին օրհներգ գրեց Իր Տիրոջ երկրպագության ու ծառայության աննկարագրելի և հորդառատ ուրախության մասին:

Այս Թագավորը, որի մասին Էքլին գրեց իր երգում՝

- ծնվել է որպես Թագավոր: Տիեզերքի պատմության մեջ ոչ ոք այդպես ճանաչված չի եղել: Փաստը մնում է փաստ, որ Քրիստոսը ի հավիտենից Թագավոր էր: Մատթ. 2:1-2-ում կարդում ենք. «Եվ երբ Հիսուսը ծնվեց Հրեաստանի Բեթլեհեմ քաղաքում՝ Հերովդես թագավորի օրոք, ահա արևելքից մոգեր եկան Երուսաղեմ, ասելով. «Որտե՞ղ է Նա, որ հրեաների թագավոր ծնվեց, որովհետև մենք Նրա աստղը տեսանք արևելքի մեջ ու եկանք Նրան երկրպագելու»»:
- Նա թագադրվեց որպես Թագավոր, ինչպես մարգարեացված էր Իր մասին: Դան. 9-րդ, Սաղ. 119:26-րդ և Զաք. 9:9-ից հասկանում ենք այդ իրադարձության մանրամասնությունները: Հովհ. 12:13-15-ում կարդում ենք, որ ժողովուրդը «արմավենու ճյուղեր վերցրեցին և Նրան ընդառաջ գնացին և աղաղակում էին. «Ովսաննա՜, օրհնյալ է Իսրայելի թագավորը, որ Տիրոջ անունով է գալիս»: Եվ Հիսուսը մի ավանակ գտավ, և նրա վրա նստեց, ինչպես գրված է, թե՝ «Մի՛ վախեցիր, ո՛վ Սիոնի դուստր, ահա՛ քո թագավորը գալիս է՝ էշի քուռակի վրա նըստած»:
- Թագավոր լինելու ճշմարտությունը կարևոր հարց էր Նրա դատավարության ժամանակ: Հռոմեացի կառավարիչները ամենաշատն այս հարցի մասին էին մտահոգված: Նրա ծնունդից հետո Հերովդես թագավորը անխղճորեն հրամայեց սպանել այդ շրջանի երկու տարեկանից ցածր եղող երեխաներին: Շատ ավելի ուշ Պիղատոսը հետաքրքրվեց Հիսուսի՝ Թագավոր լինելու փաստով: Հովհ. 18:37-ում կարդում ենք հետևյալը.

«Ուստի Պիղատոսն ասաց Նրան. «Ուրեմն Դու թագավո՞ր ես»: Հիսուսը պատասխանեց. «Դու ասում ես, թե Ես թագավոր եմ: Ես այս նպատակի համար եմ ծնվել և այս պատճառով եմ եկել աշխարհ, որ ճշմարտությունը վկայեմ: Ամեն մեկը, որ ճշմարտությունից է, լսում է Իմ ձայնը»»:

Պիղատոսը հեգնանքով Հիսուսին Թագավոր հռչակեց: Միևնույն ժամանակ Իր ազգակիցները ուրացան Իրեն՝ որպես իսկական Տիրոջ ու Թագավորի: Թեև նրանք ատում էին իրենց հռոմեացի կառավարիչներին, սակայն բացահայտորեն հայտարարեցին, որ կայսրն է իրենց միակ թագավորը: «Եվ Զատկի նախօրեն էր՝ մոտ վեցերորդ ժամը. և նա ասաց հրեաներին. «Ահա, ձեր թագավորը»: Իսկ նրանք աղաղակեցին. «Թող կորչի՛, թող կորչի՛, խաչի՛ր Նրան»: Պիղատոսն ասաց նրանց. «Ես ձեր թագավորին խաչե՞մ»: Գլխավոր քահանաները պատասխանեցին. «Մենք թագավոր չունենք՝ կեսարից բացի»» (Հովհ. 19:14-15):

- Հիսուսին՝ որպես Թագավորի տեսնում ենք նաև խաչելության ժամանակ: «Եվ Պիղատոսը մի ցուցատախտակ գրեց և խաչի վրա դրեց: Եվ գրված էր. «Հիսուս Նազովրեցի հրեաների թագավոր»: Այս տախտակը հրեաներից շատերը կարդացին, որովհետև այն տեղը, որտեղ Հիսուսը խաչվեց, քաղաքին մոտ էր. և գրված էր եբրայերեն, հունարեն և լատիներեն» (Հովհ. 19:19-20):
- Իր հուղարկավորության ժամանակ Իրեն տրվեց մեծագույն պատիվ, որը հատուկ է թագավորական ընտանիքի պատկանող անձերին: Հարուստ Հովսեփի չօգտագործած գերեզմանը, կտավները, Նիկոդեմոսի թանկարժեք խունկերը... այս բոլորը խոսում են Նրա՝ Թագավոր լինելու մասին: «Եվ սրանից հետո Հովսեփ Արիմաթիացին, Հիսուսի աշակերտը լինելով, բայց գաղտնի՝ հրեաների վախի պատճառով, Պիղատոսին խնդրեց, որ ինքը Հիսուսի մարմինը վերցնի. և Պիղատոսը նրան հրաման տվեց: Ուստի նա եկավ և Հիսուսի մարմինը վերցրեց: Եվ Նիկոդեմոսը նույնպես եկավ, որ սկզբում Հիսուսի մոտ էր եկել գիշերով, և զմուռսի ու հալվեի խառնուրդ բերեց՝ մոտ հարյուր լիտրի չափ» (Հովհ. 19:38-39):

Սա նաև մարգարեության կատարում էր. «Նրա գերեզմանը ամբարիշտների հետ դրվեց, բայց երբ մեռավ, հարուստի հետ եղավ, քանի որ բռնություն չէր արել, և խաբեություն չկար նրա բերանում» (Եսայի 53:9):

Հարության և համբարձման ժամանակ արտահայտված աշակերտների երկյուղն ու երկրպագությունը կարող էր վերաբերել միայն Երկնքի բարձր Թագավորին: «Եվ մինչ նրանց օրհնում էր, բաժանվեց նրանցից ու երկինք բարձրացավ: Եվ նրանք երկրպագեցին Նրան ու մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ» (Ղուկաս 24:51-52):

- Այն, ինչ մինչ այժմ ծածկված է աշխարհի բնակչության աչքից, մի օր տեսանելի կլինի, երբ Քրիստոսը վերադառնա աշխարհ: «Եվ Իր պատմուճանի ու ազդրի վրա գրված էր. «ԹԱԳԱՎՈՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՏԵՐ ՏԵՐԵՐԻ» (Հայտ. 19:16):

Մինչ ապրում ենք այս շնորհքի օրերը, մենք առիթ ունենք Տեր Հիսուսին հռչակելու մեր կյանքի Թագավոր: Երբ ընդունենք մեր թըշվառությունն ու մեղքը և խոստովանենք, որ Քրիստոսը միակն է, ով կրեց մեր մեղքը, այդ ժամանակ Նա կների մեզ ու միևնույն ժամանակ մեզ կվերագրի Իր արդարությունը: Այս հրաշք գործարքով կդրվի Թագավոր Տիրոջը հավատարիմ պաշտամունքի և ծառայության կյանքի սկիզբը: Նաթանայելը այդպես արեց. «Ռաբբի՛, Դու ես Աստծո Որդին, Դու ես Իսրայելի թագավորը» (Հովհ. 1:49):

Էքլին, ով իր վաղ տարիքից հավատարմորեն ծառայեց իր Տիրոջը և Թագավորին, գրեց նաև «Նա կապրի» օրհներգի բառերը:

Պողոսը Հռոմ. 12:1-ում հիշեցնում է մեզ՝ ասելով. «Աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ ձեր իմաստալից պաշտամունքն է»: «Պաշտամունք» բառը հունարեն «latreia» բառն է, որ ենթադրում է Աստծո երկրպագություն՝ ըստ ղևտական խիստ կարգուկանոնի:

Թող Տեր Հիսուս Քրիստոսը փառավորվի ու մեծարվի, մինչ շարունակում ենք մեր Թագավորին երկրպագել ու ծառայել:

Դոկտ.՝ Դանիել Ջեյմս